

Պատրիարք Հայոց, որ Ս. Քահանայապետին գրած էր, որ Հռոմ կ'ուզէ գալ, եթէ Ս. Քահանայապետն հաճի թող տալ, վախճանած կ'երեւայ:

1630 122.24 (5 Սեպտ.): Գահերէցը կը ծանուցանէ, որ Պոլսոյ Յովհաննէս Պատրիարքն Հայոց կ'ուզէ Հռոմ գալ եւ այստեղ վախճանիլ: Ս. Ժողովը կ'որոշէ գրել, որ օգտակարագոյն է եթէ Պոլիս մնայ. բաց ասկէ՝ այստեղ այժմ պատերազմեր կան եւ ծանր հիւանդութիւններ, այնպէս որ ամենուն արգելեալ է Հռոմայ մէջ մտնել:

1631 120.9 (9 Սեպտ.): Գահերէցը կը ծանուցանէ Լեմբերգի Առաքելական Կուիրակին, Լեմբ. Հայ Արքեպ.ին եւ Յիսուսեանց Մեծաւորին նամակներն, որոնց համեմատ Յովհաննէս Պատրիարք՝ Ջաքարիա Պատրիարքին յանձնելով Պոլսոյ պատրիարքութիւնը, Լեմբերգ գացեր է, անկէ Հռոմ գալու համար. այնտեղ մեծ վիճարանութիւն մ'ըրեր է հերձուածող Հայերու հետ՝ Ս. Պետրոսի գլխաւորութեան, Քրիստոսի երկու բնութեան եւ քաւարանի վրայ:

1632 43.21 (15 Մարտ): Պոլսէն Լատինաց նախկին պատրիարքական Ալեքար P. Joh. de Fratta կը գրէ՝ որ Յովհաննէս Խուլ նախկին պատրիարք Վ. Պոլսոյ Հայոց, այր ճշմարիտ կաթողիկէ եւ սերտապէս յարեալ (addicatisimus) Ս. Աթոռոյ, Լեհաստան երթալու ատեն ճամբան աւազակներէ կողոպտուեր է: